“Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիր (ՈՀԱԾ)”

Հայաստանի Հանրապետության Եվրասիական Բանկի հակաճգնաժամային հիմնադրամի ֆինանսավորմամբ իրականացնում է <<Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագիրը>>: Հինգ տարվա իրականացման ժամանակահատված ունեցող ծրագրի ընդհանուր ֆինանսական արժեքը կազմում է 50.0 մլն. ԱՄՆ դոլար:

Ծրագիրը ներառում է հիմնականում Արարատյան դաշտավայրի ու նախալեռնային գոտու մեխանիկական ոռոգումը ինքնահոսի փոխարինող համակարգերի կառուցում, մայր և միջտնտեսային ջրանցքների վերականգնում, որոշ ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման համակարգերի արդիականացում, ՋՕԸ-ների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և ՋՕԸ-ների փորձնական Միության ստեղծում:

Կատարվելիք ներդրումները կհանգեցնեն հետևյալ օգուտների.

1. էլեկտրաէներգիայի տնտեսում (տարեկան 14.37 մլն Կվտ/ժ՝ մոտ 1.26 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ),
2. շահագործման և պահպանման (Շ և Պ) ծախսերի տնտեսում՝ տարեկան մոտ 0.67 միլիոն ԱՄՆ դոլար՝ (հաշվի առնելով ինքնահոս համակարգերի կառուցումից հետո Շ և Պ ծախսերը),
3. փաստացի ոռոգվող (24.467,9 հա) և ոռոգման համակարգերի արդիականացման նպատակով կատարված ներդրումների արդյունքում հնարավորություն է ստեղծվում ավելացնել (10.432,6 հա) հեկտարների զուտ եկամտաբերության աճը:

Վարկային ծրագիրը մեկնարկել է 2016թ. հունիսի 10-ին:

Այս ծրագրով պատրաստվել և <<Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի ներդրումների ֆոնդի>> տնօրեն պ-ն Վ. Չերեկաևի հաստատմանն են ուղարկվել գնումների պլանում ներառված մի շարք փաստաթղթեր՝

- ելքերի չափման, ջրհան կայանների սարքավորումների և ԾԻԳ-ի համար համակարգիչների գնումների նպատակով, ինչպես նաև նախագծման և հեղինակային հսկողության խորհրդատվական ծառայությունների Առաջադրանքի պայմանները:
- ջրանցքների վերականգնման, սարքավորումների ձեռք բերման, տեխնիկական և հեղինակային վերահսկման Առաջադրանքի պայմաններ:

Ուղարկված փաստաթղթերի վերաբերյալ ընթանում են քննարկումներ: